Հայտատու՝ ՀՀ Արարատի մարզի Հայանիստ, Խաչփար, Սիփանիկ դպրոցների կառավարման միացյալ խորհուրդ

ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝

ՀՀ Արարատի մարզի Հայանիստ, Խաչփար, Սիփանիկ դպրոցների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝<<ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում :Մրցույթը տեղի կունենա **2021 թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 13:00-ին** ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ ՀՀ Արարատի մարզի գ.Հայանիստ Հ.Բժշկյանց 6

Տեղեկությունների համար զանգահարել 094-61-67-07 հեռախոսահամարով, էլ.փոստ hayanist@schools.am՝: